Ի գիտություն հասարակությանը

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, նպատակ ունենալով տեղեկացնել հանրությանը հանձնաժողովի 2022 թվականի աշխատանքային ծրագրով 2-րդ եռամսյակում նախատեսված աշխատանքների մասին, ստորև ներկայացնում է այդ աշխատանքների հակիրճ բովանդակությունը:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի աշխատանքային ծրագրով 2-րդ եռամսյակի ընթացքում նախատեսվում է՝

- Հայաստանի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագների վերանայում: Նշված գործընթացն իրականացվում է յուրաքանչյուր տարի՝ հիմք ընդունելով հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 22-ի N88Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկան:
- Հաշվի առնելով, որ «Էներգետիկայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի հունիսի 4-ի ՀՕ-261-Ն օրենքով «Էներգետիկայի մասին» օրենքը լրացվել է «Ինքնավար էներգաարտադրությունը և միկրոէներգաարտադրությունը» գլխով, որում տեղ գտած իրավակարգավորումների համաձայն՝ հիմնովին վերանայվում են ինքնավար էներգաարտադրության կազմակերպման և հաշվարկներին առնչվող հարաբերությունները, նախատեսվում է լրամշակել էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոնները և համապատասխանեցնել 2022 թվականի մայիսի 1-ից ուժի մեջ մտնող՝ «Էներգետիկայի մասին» օրենքում կատարված փոփոխությունների և լրացումների պահանջներին:
- Լրամշակել բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները:
- Լրամշակել գազամատակարարման համակարգի սակագների հաշվարկման մեթոդիկան:

- Հանրային կազմակերպությունների կողմից գնումների առանձին գործարքների արդյունավերության ուսումնասիրության և գնումների կարգերի նկատմամբ սահմանված պահանջներին համապատասխանության գնահատման նպատակով՝ իրականացնել հանրային կազմակերպությունների 2020 և 2021 թվականների գնումների առանձին գործարքների ընտրանքային մոնիթորինգ, որը ներառում է հանրային կազմակերպությունների կողմից գնման գործընթացի պլանավորման կամ նախապատրաստման, գնման գործընթացի կազմակերպման, պայմանագրի կնքման և կատարման մոնիթորինգը:
- Լրամշակել Էլեկտրական էներգիայի մատակարարման և հատուցման (ինքնավար էներգաարտադրող-բաշխող) պայմանագրի օրինակելի ձևը և համապատասխանեցնել «Էներգետիկայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի հունիսի 4-ի ՀՕ-261-Ն օրենքով լրամշակված «Էներգետիկայի մասին» օրենքով սահմանված կարգավորումներին:
- Մշակել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նիստերի հրավիրման, անցկացման և գրավոր քվեարկության կազմակերպման կարգը:
- Մշակել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից վարչական վարույթի վերաբերյալ գործերի կազմման, դրանց վերաբերյալ գրանցամատյանների վարման և վարչական ակտերի հաշվառման ու պահպանման կարգը:
- Քանի որ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2021 թվականի նոյեմբերի 18-ի ՀՕ-364-Ն օրենքով նոր խմբագրությամբ շարադրված «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածով սահմանվել է հանրային ծառայությունների ոլորտում հնարավոր իրավախախտման վերաբերյալ հաղորդման կամ դիմում-բողոքի քննարկման կարգը, նախատեսվում է լրամշակել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով դիմումների ներկայացման և քննարկման կարգը և գործող կարգավորումները

ներդաշնակեցնել «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածով սահմանված կարգավորումներին:

- Քանի որ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2021 թվականի նոյեմբերի 18-ի ՀՕ-364-Ն օրենքով նոր խմբագրությամբ շարադրված «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 20-րդ հոդվածով սահմանվել են հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող անձանց գործունեության մոնիտորինգ իրականացնելուն առնչվող կարգավորումներ, նախատեսվում է մշակել էներգետիկայի բնագավառի և ջրային ոլորտի կարգավորվող անձանց գործունեության մոնիթորինգի իրականացման կարգը և համապատասխանեցնել ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 20-րդ հոդվածով սահմանված կարգավորումներին:
- Լրամշակել «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության կողմից հաշվետվությունների ներկայացման կարգը:
- Մշակել Հայաստանի Հանրապետության բնակավայրերում հանրային շարժական կապի ծածկույթի ապահովման աշխատանքների իրականացման վերաբերյալ վերլուծական տեղեկանք, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության տարածքում հանրային շարժական կապի ցանցերի զարգացման և ծածկույթների ընդլայնման գործընթացի գնահատմանն ու շարժական կապի ցանցերի և ծածկույթների շարունակական արդիականացմանը:
- Մշակել Հայաստանի Հանրապետության բնակավայրերում հանրային ամրակցված կապի ծածկույթի ապահովման աշխատանքների իրականացման վերաբերյալ վերլուծական տեղեկանք, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության տարածքում հանրային ամրակցված կապի ցանցերի զարգացման և ծածկույթների ընդլայնման գործընթացի գնահատմանը, ՀՀ համայնքներում ամրակցված կապի ցանցերի ներթափանցելիության ապահովմանն ու հանրային ամրակցված կապի ցանցերի շարունակական արդիականացման աշխատանքների իրականացմանը:

- «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի համաձայն՝ ամփոփել և մինչև սույն թվականի մայիսի 1-ը մամուլում հրապարակել հանձնաժողովի 2021 թվականի գործունեության հաշվետվությունը:
- Եռամսյակային արդյունքներով ամփոփել և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել՝
  - սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
  - սպառողների դիմում-բողոքների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
  - նոր պառողի կամ պառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական, գազամատակարարման ցանցին և ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերին միացման եռամյակային ցուցանիշները,
  - էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և ջրային ոլորտի կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները: